ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

20.10.25 № ԱՎ/06.3/33880-25
Ձեր N _____

«ԳՐԻԳՈՐՅԱՆ ՇԻՆ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ
ՊԱՐՈՆ ԳԵՎՈՐԳ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ
ՀՎՀՀ 00481595
Հասցե՝ ք. Երևան, Էրեբունի, Մուշական 8փ, տ 92
Հեռ. +374 60 38 88 38
Էլ. հասցեն՝ grigoryanshin.llc@gmail.com

Ծանուցում
Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

Հարգելի պարոն Գրիգորյան,

Առողջապահության նախարարության և «Գրիգորյան Շին» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) միջև 04.08.2021թ. կնքվել է «ՀՀ ԱՆ ԲՄԱՇՁԲ-2021/2» պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ 4 688 987 400 (չորս միլիարդ վեց հարյուր ութսունութ միլիոն ինը հարյուր ութսունյոթ հազար չորս հարյուր) ՀՀ դրամ ընդհանուր արժեքով: Պայմանագրի 1.3-րդ կետի համաձայն՝ կատարման ժամկետ է սահմանվել 48 ամիս: **Պայմանագիրն ուժի մեջ է մտել 04.08.2021, իսկ կատարման ժամկետն է մինչև 04.08.2025թ.**:

Մասնագիտական խմբի (պատասխանատու ստորաբաժանում) կողմից ներկայացված եզրակացության համաձայն՝ պայմանագրով սահմանված աշխատանքների կատարման վերջնաժամկետը լրանալուց հետո կատարված են

աշխատանքների շուրջ 37%-ը՝ 1,741,160,006.27 (մեկ միլիարդ յոթ հարյուր քառասունմեկ միլիոն մեկ հարյուր վաթսուն հազար վեց դրամ քսանյոթ լումա) ՀՀ դրամ գումարի չափով: Նախատեսված 11 մասնաշենքերի կառուցման աշխատանքներից կատարվել են ընդամենը 4-ը: Պայմանագրի չկատարված մասի ընդհանուր արժեքը կազմում է 2,947,827,393.73 (երկու միլիարդ ինը հարյուր քառասունյոթ միլիոն ութ հարյուր քսանյոթ հազար երեք հարյուր իննսուներեք դրամ յոթանասուներեք լումա) ՀՀ դրամ:

Ընկերությունը գրավոր ծանուցել է պայմանագրի ժամկետների խախտման վերաբերյալ, մասնավորապես՝

ՀՀ առողջապահության նախարարության գլխավոր քարտուղարի 29.08.2025թ թիվ ՎԳ//28829-2025 գրությամբ ընկերությանը ծանուցվել է.

Մեջբերում եմ. «...ՀՀ ԱՆ «Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն» ՓԲԸ վերակառուցման շրջանակներում տրամադրվել է թվով 11 առանձին շինարարական թույլտվություն, որոնք պետք է իրականացվեին 48 ամսվա ընթացքում:

Հիմք ընդունելով Ձեր 04.08.2025թ թիվ 86/25 գրությունը՝ Ձեր կողմից հաստատվել է այն փաստը, որ ՀՀ ԱՆ «Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն» ՓԲԸ մասնաշենքերի վերակառուցման շինարարական աշխատանքներն ավարտված չեն:

Հաշվի առնելով վերը նշվածը, ինչպես նաև այն հանգամանքը, որ **Թիվ ՀՀ ԱՆ ԲՄԱՇՁԲ-2021/2** պայմանագրի շրջանակներում կատարված է աշխատանքների շուրջ 37%՝ խնդրում եմ ներկայացնել պարզաբանում աշխատանքների, պայմանագրով սահմանված ժամկետներում, չկատարման մասին» մեջբերման ավարտ:

ՀՀ առողջապահության գլխավոր քարտուղարի 29.08.2025թ թիվ ՎԳ//28829-2025 գրությանն ի պատասխան Ընկերությունը 05.09.2025թ թիվ 100/25 գրությամբ հայտնել է, մեջբերում եմ «...թույլատրել գումար նախատեսել N5 (նարկոլոգիա), որի գումարը կազմում է 95 000 000 ՀՀ դրամ, N9 (լվացքատուն), որի գումարը կազմում է 31 000 000 ՀՀ դրամ: Վերացնել N1 մասնաշենքի թերությունները, N5 և N9 մասնաշենքերի կողային մասերի բարեկարգումը, դեպի N5 մասնաշենքի

ճանապարհի համահարթեցումը: Այս թվարկվածները կատարելու դեպքում կունենանք թվով 6 ավարտված մասնաշենք...» մեջբերման ավարտ:

Սույն գրությամբ Ընկերության կողմից ևս փաստվել է, որ Ընկերությունը խախտել է Պայմանագրի 1.3-րդ կետով նախատեսված ժամկետը:

Պայմանագրի 3.1.4-րդ կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի

Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը):

Միաժամանակ թիվ ՍՆԴ/1392/04/25 գործի շրջանակներում ՀՀ սնանկության դատարանի 24.07.2025թ որոշմամբ «Գրիգորյան Շին» ՍՊԸ-ն ճանաչվել է սնանկ: ՀՀ սնանկության դատարանի 01.08.2025թ որոշմամբ «Գրիգորյան Շին» ՍՊԸ սնանկության գործով կառավարիչ է նշանակվել Զավեն Վարդանյանը: Վերոգրյալը փաստում է, որ Ընկերությունը խախտել է նաև Պայմանագրի 3.4.11 կետը.

«3.4.Կապալառուն պարտավոր է ...

«...3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին»:

Արդյունքում, Ընկերությունը սնանկացման գործընթաց սկսելու վերաբերյալ նախապես գրավոր չի տեղեկացրել ՀՀ առողջապահության նախարարությանը, ավելին 05.09.2025թ թիվ 100/25 գրությամբ Ընկերությունը պարտավորվել է կատարել պայմանագրի շրջանակներում շինարարական աշխատանքներ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամաբ) կատարելը: Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընկերությունը չի կատարել Պայմանագրով ստանձնած պարտավորությունները, ինչպես նաև «Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն» ՓԲԸ վերակառուցման աշխատանքների կատարման մասնագիտական խմբի եզրակացությունը՝ Առողջապահության նախարարությունը՝ ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, միակողմանի լուծում է Պայմանագիրը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընքացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարները:

Հաշվի առնելով վերոգրյալը, տեղեկացնում եմ՝ Պայմանագրի միակողմանի լուծման արդյունքում պայմանագրի կատարման ապահովման գումարը կազմում է 216 209 954 (երկու հարյուր տասնվեց միլիոն երկու հարյուր ինը հազար ինը հարյուր հիսունչորս) ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական **900008000664** հաշվեհամարին և որակավորման ապահովման գումարը կազմում է 126 281 860,12 ՀՀ դրամ (մեկ հարյուր քսանվեց միլիոն երկու հարյուր ութսունմեկ հազար ութ հարյուր վաթսուն ՀՀ դրամ տասներկու լումա), որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական **900008000664** հաշվեհամարին:

Միաժամանակ տեղեկացնում եմ, եթե մինչև օրենսդրությամբ սահմանված ժամկետի ավարտը Ձեր կողմից վճարվի վերը նշված պայմանագրի և որակավորման ապահովման գումարները, ապա Ընկերությունը չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Նշված բոլոր գումարները անհրաժեշտ է վճարել Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված վերը նշված գանձապետական հաշիվներին և

վճարման հանձնարարականների բնօրինակները օրենսդրությամբ սահմանված ժամկետում ներկայացնել Առողջապահության նախարարության ֆինանսատնտեսագիտական վարչության գնումների համակարգման բաժին (209 սենյակ):

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ ՎԱՐԴԱՆՈՒՇ ԳՐԻԳՈՐՅԱՆ

10/20/2025

ՈՈՒԲԵՆԻ ՎԱՐԴԱՆՈՒՇ

Signed by: GRIGORYAN VARDANUSH 6802780100

Կատարող՝ Արմինե Գալուստյան
ՀՀ ԱՆ ֆինանսատնտեսագիտական վարչություն
հեռ. 060-80-80-03/1702